

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԱՊԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՍՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ. ԹԵՄԱՏԻԿ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ

Ամփոփում: 150 տարուց ավելի է՝ անեկղոտների ժողովածուներում, հեքիաթների հատորներում, առակների գրքերում և տարաբնույթ այլնայլ հրատարակություններում (տեղավայրերին նվիրված գրքեր, բարբառագիտական ուսումնասիրություններ և այլն) տեղ են գտել վիպական երգիծական բանահյուսության այնպիսի տեսակներ, որոնք իրենց բնույթով, նպատակներով ու կերպարներով չունեն ժողովրդական բանավեստի՝ վերը թվարկած տեսակների ժանրը բնութագրող ամենաեական հատկանիշները՝ տարաբնույթ թեմատիկ դրսևորման լայն ու ընդգրկուն հնարավորություններ, կերպարների կերտման բազմազանություն, զավեշտի դրսևորման տարատեսակ հնարանքներ, մատուցվող նյութի՝ անսպասելի ծիծաղ հարուցող ավարտ և այլն:

Այնուամենայնիվ, այդ նյութերն աչքի են ընկնում իրենց թեմատիկ ինքնատիպ դրսևորումներով, կառուցվածքային առանձնահատկություններով, պատկերավորության միջոցների և նյութը մատուցելու յուրահատկություններով: Ի տարբերություն ստի՝ ստախոսության (այդ երևույթի վերաբերյալ ժողովուրդը բազմաթիվ քննադատական իմաստախոսություններ և առակներ է ստեղծել) սուտ հորինվածքները ժողովրդական երգիծական բանահյուսության այնպիսի տեսակների թվին են պատկանում, որոնցից հաճույք են ստանում թե՛ ասացողը, թե՛ ունկնդիրը:

Վիպական երգիծական ժանրի այդպիսի բանահյուսական ստեղծագործությունները մենք անվանել ենք **ստապատումներ և սուտասեղուկներ**: Ընդ որում, որպես դրանց ժանրը բնորոշող հատկանիշ, ելակետ ենք ընդունել՝ ստապատումների համար **դիպաշարային** (երբեմն կարճառոտ, երբեմն էլ ծավալուն սյուժեով) ստահող

*պատմությունների առկայությունը, իսկ սուտասելուկների համար՝ **անդիպաշար**¹ անսյուժե (երկխոսական և առանց երկխոսության արձակ կամ չափաժողովի կառուցվածքով), հորինվածքային բնույթը:*

***Հիմնաբառեր՝** վիպական բանահյուսություն, երգիծական բանահյուսություն, ստապատում, զվարճապատում, զվարճախոսություն, կառուցվածքային առանձնահատկություններ, սյուժետային և անսյուժե կառուցվածք*

Հայոց վիպական երգիծական բանահյուսության ուսումնասիրությունների ասպարեզում հայ ժողովրդական ստապատումների և սուտասելուկների վերաբերյալ առ այսօր ոչ միայն համապարփակ որևէ հետազոտություն չի կատարվել, այլև չեն մատնանշվել այն սահմանները, որոնցով երգիծական բանարվեստի այդ նմուշներն առանձնանում են բանահյուսության մի շարք տեսակներից:

Բանահյուսության այս տեսակներին անդրադարձը պայմանավորված էր իմ դոկտորական ատենախոսության՝ հայկական զվարճապատում-զվարճախոսությունների անեկդոտների մասին աշխատանքով: Վերջին ավելի քան 150 տարում լույսընծայված տարաբնույթ ժողովածուներում ու գրքերում և արխիվային նյութերում տեղ են գտել նաև այնպիսի երգիծական ստեղծագործություններ, որոնք չունեն անեկդոտի տեսակը բնորոշող ամենակարևոր հատկանիշը՝ անսպասելի ծիծաղ հարուցող ավարտը: Այդ ընթացքում նման նյութերը մենք տարանջատեցինք, ի մի բերեցինք և հետագայում անվանելով ստապատումներ և սուտասելուկներ՝ սկսեցինք հետազոտական աշխատանք կատարել:

Սույն թեմային վերաբերող աշխատանքներից մեկը տպագրության փուլում է¹, իսկ այս ուսումնասիրությունը նվիրված է ստապատումների և սուտասելուկների թեմատիկ

¹ Առաջիկայում Բեյրութի «Հայագիտական հանդես»-ում լույս կտեսնի սույն թեմային վերաբերող մեր հոդվածը:

դրսևորումներին ու կառուցվածքային առանձնահատկություններին:

Հրատարակիչները, հաշվի առնելով ստապատումների և սուտասելուկների երգիծական բնույթը և չափազանցված անիրական հորինվածքային կառուցվածքը՝ ժողովրդական երգիծանքի այդ ինքնատիպ նմուշներն ընդգրկել են բանահյուսական-ազգագրական տարատեսակ ժողովածուներում, մասնավորապես հայ ժողովրդական հեքիաթների հրատարակություններում և անեկդոտների գրքերում:

Ստապատում-սուտասելուկների թեմատիկ դրսևորումները

Ստապատումներն ու սուտասելուկները ներկայանում են տարատեսակ թեմաներով՝ որսորդական, ձկնորսական, գյուղատնտեսական և անասնապահական աշխատանքներին առնչվող, հոկտեմբերյան հեղափոխության և նրա առաջնորդների (Լենին, Ստալին), քաղաքացիական կռիվների ու նրա աչքի ընկած հերոսների, տարբեր ժամանակների պատերազմական տարիների (մասնավորապես Երկրորդ աշխարհամարտի ու նրա մասնակիցների՝ Հիտլեր, Ստալին, Ժուկով և այլք), նույնիսկ Ղարաբաղյան պատերազմին վերաբերող նմուշներ:

Ի դեպ, մեր ձեռքի տակ եղած ավելի քան մեկուկես դարյա ժառանգության մեջ պատերազմական և որսորդական թեմաներով նմուշները գերակշռում են:

Մենք գիտենք, որ երբեմն մեր շրջապատից ոմանք իրենց լսածը այլ միջավայրում ներկայացնում են որպես ականատես՝ պատմելով իրենց անունից: Հայկական հորինվածքներում ասացողը կա՛մ Լենինի մտերիմն է, կա՛մ Մալայա գեմյայում Խրուշչովին փրկողը, կա՛մ էլ Ժուկովի հավատարիմ մարդը և այլն: Ահա նմանատիպ նմուշներից մեկը.

Ղառնեղանց Շամիրը, որ ճանաչված սուտասան էր, ահա թե ինչ էր պատմում.

– Հեղափոխության ժամանակ Ռուսաստանում էի: Վալոդի հետ (նկատի ունի Լենինին) շատ մտերիմ էի: Մի օր, բեզարած գնացի նրա տուն, որ մի քիչ հանգստանամ: Տեսա՝ Նադյան¹ քնած է: Կողքին թիկն տվեցի, աչքս կպավ: Շատ էի քնել, թե քիչ, մեկ էլ զգացի, որ ուսս բոթում են: Աչքերս բացեցի՝ Վալոդն էր: Երբ տեսավ, որ ես եմ, ասաց. «Ա՛, էտը տի՛, Դառնելով, սպի՛, սպի՛»:

Այ, եղբան մոտիկ էի Վալոդի հետ²:

Մեծ է Երկրորդ աշխարհամարտի թեմաներով ստապատումների քանակը, որոնք պատմում են համակենտրոնացման ճամբարներում գերիների կյանքի ու Հիտլերի՝ այդ ճամբարներ այցելությունների մասին: Հիտլերի և հայ գերիների հանդիպումների տարբերակները բավականին շատ են, որոշ դեպքերում նա հանկարծակիի է գալիս, երբեմն էլ ճանաչելով՝ ամոթանք տալիս իր հայ ընկերոջը:

Ահա դրանցից մի քանի նմուշ:

Ճողոյանց Տիկոն պատմում է գերությունից. – Ձեզ մատաղ, պլեն տեղը նեմեցը հրաման տվուց, որ շարք կադնենք, թե ինչ ա՛ Հիտլերը գալիս ա: Շարվեցինք, Հիտլերը ավտոյիցը իջավ, շարքի ըղաքին կադնեց: Մին էլ աշկը ընգավ ինձ: Մոդիկացավ, աշկերը ըրտասունքով լցրած՝ փրթաթվեց ինձ ու ասավ.

– Էս իգիթի՞ն էս ուր եք բերել³:

Կամ՝

– Պլեն էի ընգել, Հիտլերն էկավ սաղին շարք կնգնացրուց ու հերթով չփալախ ա տալի, որ էկավ ինձ հասավ, ըրեախ մոիկ արավ ու ասավ.

– Պաաաա՛հ, արա դու էլ ես ըստի⁴:

¹ Նադյա – Լենինի կինը՝ Նադեժդա Կրուպսկայան:

² Հա՛, էդ դո՛ւ ես, Դառնելով, քնի՛, քնի՛:

³ **Մբազյան Ս.**, Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամտություններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ, 1999, էջ 54:

⁴ Ֆեյսբուքյան գրառումներ, Լոռվա հումոր, 17. 02. 2018:

⁵ Նույն տեղում:

Կամ է՝

– *Բա քմանչքմ չե՞ս, Գևորգ, դուն էլ քստի՞:*

– *Ամոթիցը քիչ էր մնրմ գեղինը մտնեի՞:*

Ի դեպ, ստապատումներ և սուտասելուկներ ներկայացնող ասացողը ստախոս չէ, նա, ինչպես շատ ժողովածուներ կազմողների նմուշներում է ներկայացվել, պարծենկոտ է: Իսկ պարծենկոտը հասարակության, շրջապատի համար վտանգավոր չէ, ինչպես ստախոսը: Նա բնատուր շնորհքով աշխարհ եկած մի անձնավորություն է, որը «ոտքի վրա» հորինում-ստեղծում է սուտ պատմություններ, և մարդիկ դրանց հեղինակներին չեն քննադատում ու պախարակում: Ընդհակառակն, դրանցում ներկայացված պատկերավոր նկարագրություններից ու գունագարդումներից բավականություն են ստանում թե՛ ստապատում-սուտասելուկների պատմող-ասացողները, թե՛ դրանց ունկնդիրները, առավել ևս երբ վերջիններս հաստատ գիտեն, որ դրանք իրականության հետ ոչ մի առնչություն չունեն:

Ասացողները վիրավորվում են, երբ կասկածի տակ են դնում իրենց պատմությունները, ուստի դրանց հավաստիությունը վկայող փաստեր են մեջբերում.

– *Չեք հավատում, գնացեք քարը տեսեք, չուր հմի մնրմ ա, թե քարին էլ հավատրմ չեք, բաղմանչի Մաթոյին հարցրեք, փառք ասաու սաղ ու կենդանի ա:*

– *Պակաս փչանը Մաթոն ա՞, – համարձակվեց ասել երիտասարդներից մեկը:*

– *Ինչ փչան, ուրեմն ես սուտ եմ ասո՞ւմ, քորփա՞: Լավ կմեծանաք, ձեր աչքով կտենաք իմ պատմածները, – վեր կացավ գերանի վրայից, իջավ ցած, փափախր քաշեց ճակատին, գլուխը կախ չիբուխը փստացնելով, կամաց-կամաց հեռացավ:*

¹ Կատակում են մովսեսցիները / գրառողներ՝ Ա. Պապյան, Հ. Պապյան, Եր., «Նոյյան տապան» հրատ., 2012, էջ 11:

² ՀՀ ազգային արխիվ, ՀԳՄԿ- ի ֆոնդ 1336 , ցուցակ 7, գործ 713, Գրառեց Հրաչյա Հակոբյան, Մանկուց լսածներից, փչոցներ, էջ 31:

Ժողովրդական բանահյուսության այս տեսակի գերակշռող մասին բնորոշ է նաև մի շատ կարևոր հատկանիշ. ներկայացվող ստապատումներում և սուտասելուկներում հանդես եկող գլխավոր հերոսը ասացողն է, և նա, իբրև ականատես ու մասնակից, նյութը մատուցում է առաջին դեմքով՝ դրանով էլ ավելի հավաստի դարձնելով ասելիքը:

Ստապատումների և սուտասելուկների կառուցվածքային առանձնահատկությունները

Ինչպես երգիծական զվարճապատումների և զվարճախոսությունների (անեկդոտների) պարագայում, ստապատումների և սուտասելուկների դեպքում ևս ելակետ են ընդունվել դրանց ժանրը բնորոշող ամենակարևոր հատկանիշները, դրանք են՝ ստապատումների համար՝ *դիպաշարային* (երբեմն կարճառոտ, երբեմն էլ ծավալուն սյուժեով) ստահող պատմությունների առկայությունը, իսկ սուտասելուկների համար՝ *անդիպաշար՝ անսյուժե* (երկխոսական և առանց երկխոսության արձակ կամ չափածո խոսքի կառուցվածքով) հորինվածքային բնույթը:

Ինչպես գիտենք, արևելահայոց հեքիաթներից շատերն ունեն նախերգանքային սկսվածքներ, որոնք չափածո կառուցվածքով հանդես են գալիս նաև իբրև ինքնուրույն միավորներ, օրինակ՝

*Հեքիաթ, հեքիաթ էս պապըս, // Ղաշխա քուռակը տակըս,
// Զիզի հարսը քամակըս, // Տաք կրկենին աղաքըս՝:* (ԱՄՇՀ)

Կամ

*Հըթ, հըթ, պապըս է, // Աշնան քուռակ տակըս է, // Բրդով
շորեր քամակըս է, //*

*Գաթա հալվեն պարկըս է, // Սարը սարին սըլվըլա, // Պա-
բեն վրեն գըլվըլա:* (ԱՄՇՀ)

Արևմտահայոց ստապատումներից շատերը նույնպես ունեն նախաբանային չափածո բանաձևային սկսվածքներով

¹ Արմեն Շ. Սարգսյանի հավաքածու, այսուհետև մեր գրառումները մեջբերման վերջում փակագծում կներկայացվեն հապավումով՝ (ԱՄՇՀ):

կառույցներ՝ **«թաքյարլամաներ»**։ Սրանք ևս երբեմն հանդես են գալիս իբրև ինքնուրույն միավորներ։

Ինչ խոսք, արևելահայոց և արևմտահայոց ոչ բոլոր ասացողներն են օգտագործում հեքիաթի կամ ստապատումի նախերգանքային այդ սկսվածքները։ Դրանք առավելապես հատուկ են վարպետ ասացողներին։

Վաստակաշատ մանկավարժ, հայագետ Հակոբ Չոլաքյանը գրում է. «Քեսապցի և այնթապցի վարպետ ասացողները «սէօտ» պատմելուց առաջ մատուցվող նյութը «համեմել» են նախերգանքով, որը քեսապցիներն անվանում են թաքյարլամա, իսկ այնթապցիներն այդ եզրաբառն արտաբերում են՝ **թէքըրլէմէ**, որը թրքերեն է և բառացիորեն կը նշանակել «գլորելով, գլորտուք»¹, այսինքն՝ սուտ գլորել՝ փչել։

Այնթապցի վարպետ ասացող Գրիգոր Պարսումյանի գրառած 13 նմուշ թէքըրլէմէ-նախերգանքներ է մեզ տրամադրել Մատենադարանի և Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի աշխատակից Միհրան Մինասյանը։ Ահա դրանցից մի քանիսը՝

* Ըրէր է՝ ծրեր է, // Փիղը արանց թելի թռեր է, // Ճանճն ալ վախեն // Վանայ ծովի չափ շռեր է։

* Այս սուտը խաս է, հին չունի, // Հին բաղանիքը թաս չունի, // Շենշագն ալ առջն երիս բագ ունի, // Ձգիք քահ-քահը, // Էկաւ պատմելու պահը։

Ստապատումներում ներկայացված մի շարք իրադարձություններին նախորդում են ինչ-որ նպատակով ձեռնարկված գործողություններ (որսորդություն, կորած ապրանքի փնտրտուք և այլն), որի ժամանակ էլ անցում է կատարվում ստապատումին։

Երբեմն էլ ասացողներն այնպես են տարվում իրենց պատմությամբ, որ շատ դեպքերում առաջնային նպատակը դառնում է երկրորդական, և նրանք մոռանում են անդրա-

¹ **Չոլաքեան Ծակոբ**, Սուտլիկ հեքիաթներ պատմողներս, Դիմատետրի (իմա՝ ֆեյսբուքի) նյութերից, 23032021։

դառնալ բուն գործողության նպատակին: Նման կառուցվածքի հանդիպում ենք բանագետ-ազգագրագետ Սերգեյ Վարդանյանի հրատարակած «Թագավորի երագները» բանահյուսական ժողովածուի պատումներից մեկում, երբ կովի երկար փնտրտուքին հետևում է հերոսին հանդիպած հսկայական սունկը, և սկսվում է դրա չափազանցված նկարագրությունն ու օգնության կանչով մի կերպ գյուղ հասցնելու պատմությունը¹:

Ստապատումներից մեկում էլ թշնամու՝ տանկերով բեռնատար ավտոմեքենային հետապնդող պատմությանը հաջորդում են Դնեպր գետում եղած ձկնատեսակների նկարագրությունները, որոնք չեն առնչվում նախքան այդ ներկայացված իրադարձություններին, և միայն ունկնդրի խոսքից հետո է դադարեցվում և նոր միայն անցում կատարվում բուն նյութին (ԱՄՇՀ):

Հայ ժողովրդական սուտասելուկների գերակշռող մասը հարցուպատասխանական-երկխոսական կառուցվածքով է՝

Հարցնում են.

– Շամի՛ր քեռի, որ Լենինին ու Ստալինին ճանաչում էիր, բա Խրուշչովն՞ էդ ժամանակ ի՞նչ գործի էր:

– Պաճան լախոտ էր. առաջներս վազվզում էր...³

Կամ՝

– Ատա՛, էտ ի՞նչ ա, գոմիշները մտել են բաղի մեջ, հավուդը ուտում են:

Վազ տալով գնրմ են և ի՞նչ տեսնեն, ո՛չ գոմիշ, ոչ էլ ուրիշ անասուն, սև հավուդը էնքան բերք ա տվե, որ վազերը սևացել են⁴:

¹ Թագավորի երագները, Բանահյուսական ժողովածու / Կազմեց, ծանոթագրեց և հրատ. պատրաստեց Սերգեյ Վարդանյանը, Եր., Գասպրինտ, 2003, էջ 20:

² Խրուշչով – ԽՍՀՄ կենտկոմի առաջին քարտուղար:

³ **Աբաղյան Ս.**, Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամտություններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ, 1999, էջ 54:

⁴ Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 10, Գ. Գևորգյան, Ղզլար, Եր., ՀնԽՄՀ ԳԱ հրատ., 1980, էջ 90:

Երբեմն ստապատում-սուտասելուկներն ընկած են լի-
նում որևէ իրադարձության, գործողությունների միջնամա-
սում: Այս դեպքում դրանք դառնում են պայման-առաջադրան-
քի՝ առաջացած վեճը սուտ հորինվածքներով հարթելու միջոց:

Այսպես, նմանատիպ նմուշներից մեկում հարևան երկու
գյուղերի բնակիչների միջև ջրադաճում հերթի համար վեճ է
առաջանում, ու *«Ջրադաճյանը միջամտում է և պայման
դնում»*:

– Ով մի կարգին սուտ ասի, հերթը կտամ նրան...¹:

Եվ սկսվում են հերթի համար վիճաբանողների սուտ
պատմությունները, և առավել ճարպիկ ու հնարամիտ սու-
տասանը հաղթում է և առաջինը օգտվում ջրադաճից:

Փաստենք նաև, որ այս կառուցվածքի նմուշներն առկա
են նաև արևմտահայոց բանահյուսության մեջ: Ջրադաճյանի
առաջարկած պայման-առաջադրանքի տարբերակին հանդի-
պում ենք Հակոբ Չոլաքյանի «Ճաղատիկին եւ ջրադաճյանին
հեքիաթը» գրառման մեջ²:

Եթե մեծերի սուտ ասածները մեծ մասամբ մրցույթը
հաղթելու և մրցանակ-խոստումը ձեռք բերելու նպատակ են
հետապնդում, ապա մանկական սուտասելուկներն իրենց
ծնողի, հարազատի աներևակայելի ունակություններով օժտ-
ված լինելու և դրանք իրական կյանքում դրսևորելու, շրջա-
պատին զարմացնելու մասին են:

«Այդ պահերին ես հիշում էի գյուղի ընկերներիս, – իր
հուշապատումներից մեկում գրում է Ա. Քոչարյանն ու շա-
րունակում, – պարծենում էինք առանց քննադատությունից
վախենալու՝ ասես մրցելով մեր ստերի անպարագիծ, անչա-
փելի մեծությամբ»:

¹ Վահան Ավետիսյան, Վարդաձոր, Եր, «Զանգակ -97», 2008, էջ 221-222:

² Թակոբ Չոլաքեան, Քեսապ, Բ. հատոր, հրատ Ամերիկաբնակ
Քեսապցիներու Ուսումնասիրաց Միութեան, տպ. «Ասֆահանի»,
Հալէպ, 1998, էջ 441-443:

– Իմ մոքքի տրդեն կարա ճկույթի ըդունգով կանցերվա (իմա՝ պահածո) բաց անի, – հաստատուն ձայնով ասում էի ես՝ ինքս էլ հավատալով իմ ստիին:

– Իմ հերը կարա Թևոր բեմիցը¹ հեննց գոռա, որ Ահնիգորա սարըմը լսեն:

– Իմ ախպերը կարա էն սամալյոտիցը հեննց թռչի, որ Ծըլլանի գլխին վեր գա²:

Երբեմն էլ պարծենկոտության այդ մրցույթներում դիմացինին գերազանցելու նպատակով ներկայացված մանկական անմեղ խոսքն այնպիսին է լինում, որ մեծահասակների մոտ ակամա ծիծաղ է առաջացնում՝ տեսակը դարձնելով մանկական զվարճախոսություն՝

– Իմ պապան էլ կարա հեննց փախչի, որ միիցեքը չկարենան բռնեն... (ԱՄՇՀ):

40 տարի առաջ մեր գրառած մանկական բանահյուսական ստեղծագործություններից մեկը վերաբերում է պատերազմական թեմային: Այն չափածո կառուցվածք ունեցող ստապատում է, որտեղ երեխայի բերանով հերոսը պարզևատրումների կապակցությամբ կասկածողներին մանրամասն ներկայացնում է իր շքանշաններ ստանալու պատմությունը՝

– Խաչո՛ր բիձի, Խաչո՛ր բիձի, // Էդքան մեղալ քեզ ուրդից ա://

–Ա՛յ, Էն պատի տակից ա, // Անձրն կուգա ջուռի-ջուռի, //

Բնձ դրգեցին հետախուզի, // Ես գնացի կուզի-կուզի, //

Դեմքս ելան էրկու ցմիոր գերմանացի, // Հրացանըս գոգոցուցի, //

Մեկին տվի ֆրոֆրոցուցի, // Էն մեկն ասավ՝ ռուս, ասի՛ սուս://

¹ Թևոր բեմ – Լոռու Շամուտ գյուղի 14-րդ դարի թևավոր խաչի տարածքը:

² **Քոչարյան Անահիտ**, Ֆեյսբուքյան հուշապատումներ, Լոռվա հումոր, 4082022:

*Ձեռն ու ոտը կապեցի, // Կամենդատուրին հանձնեցի, //
Էսքան մեղալ ըստացուցի: (ԱՄՇՀ)*

Ստապատումների պատկերավորությանը նպաստող ամենակարևոր գործոնը թվաքանակի և չափի միավորների, տարբեր առարկաների, կենդանիների, գործողությունների ու երևույթների **չափազանցությունն է**:

Որոշ պատումներում գործողություններն ընթանում են ժամանակագրության խախտումներով, որը գրականագիտության մեջ անվանում են **անախրոնիզմ**:

Այսպես, Վահե Անթանեսյանի գրքի¹ ստապատումների հերոսները Հաղպատի վանքի պահակներն են, և զավեշտալին այն է, որ տարեց պահակները հանդես են գալիս և՛ իբրև պատմաբան, և՛ իբրև ականատես ու էքսկուրսավար, ու նրանց ներկայացրած պատմություններում ժամանակային խախտամբ տարբեր ժամանակների մարդիկ և նրանց կատարած գործողությունները հանդես են գալիս միաժամանակ:

Ստապատումներից մեկում էլ «պատմաբան» Գեչին բացատրում է.

– Էս դուռն իրանն ա, չի փոխվել, կառուցվել ա տասերորդ դարում: Կառուցել ա Չոբանանց Մեխոն: (Մեխոն մահացել է 1949 թ.):²

Իսկ մեկ այլ ստապատումում կրկին Գեչին *անախրոնիզմով* մանրամասներ է պատմում Հաղպատի վանքում անցկացրած Սայաթ-Նովայի կյանքից ու աշուղ-բանաստեղծի հետ վայելած խորովածից.

Շարունակելով իր պատմական բացատրությունները՝ Գեչին ասում է.

– Էս էլ գաղտնի խոդն՝ ա, դվորը Սայաթ-Նովեն գներ Ըխտալի՞, պորտն Աննայի պորտին քսեր, գեր...

¹ **Անթանեսյան Վ.**, Լոռվա ժպիտներ, Եր., 2012:

² Նույն տեղում, էջ 14:

* Խոդ – ճանապարհ, անցուղի:

** Ըխտալի – Ախթալա:

*Ապա դպրոցականներին ցույց տալով մի հնամաշ, դուրս
նետված թիթեղյա վառարան՝ բացատրում էր.*

*– Էս էլ ըրեխեք ջան, մեր Սայաթ-Նովի մանդալն ա, որ
խրոված անեինք, յիշուր հետ ուտեինք...¹*

Այսպիսով, հայ ժողովրդական ստապատումներն ու սու-
տասելությունները վիպական երգիծական բանարվեստի մյուս
տեսակներից (երգիծական զվարճապատումներ և զվարճա-
խոսություններ՝ անեկդոտներ, երգիծական հեքիաթ, երգիծա-
կան առակ և այլն) առանձնանում են թե՛ իրենց տարաբնույթ
թեմաներով ու դրանցից բխող խնդիրների լուծումներով, թե՛
կառուցվածքային յուրահատկություններով ու պատկերա-
վորման միջոցների ինքնատիպ կիրառություններով և՛ թե
նյութը մատուցելու յուրահատկությամբ (մեծ մասում գլխա-
վոր հերոսն ասացողն է):

Գրականություն

1. Աբաղյան Ս., Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամ-
տություններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ., 1999, էջ 54, 64 էջ
2. Անթանեսյան Վ., Լոռվա ժպիտներ, Երևան, հեղ. հրատ., 2012
3. Արմեն Շ. Սարգսյանի անձնական հավաքածու
4. Թագավորի Երազները, Բանահյուսական ժողովածու /
Կազմեց, ծանոթագրեց և հրատ. պատրաստեց Սերգեյ Վար-
դանյանը, Երևան, «Գասպրինտ», 2003, էջ 20
5. Կատակում են մովսեսցիները / Գրառողներ՝ Ա. Պապյան, Հ.
Պապյան, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2012, էջ 11
6. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 10, Գ. Գ-
ևորգյան, Ղզլար, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1980, էջ 90
7. Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Բ. հատոր, հրատ. Ամերիկաբնակ
Քեսապցիներու Ուսումնասիրաց Միության, տպ. «Ասֆահա-
նի», Հալէպ, 1998, էջ 441-443
8. Չոլաքեան Յակոբ, Սուտլիկ հեքիաթներ պատմողներս, Դի-
մատետրի (իմա՝ ֆեյսբուքի) նյութերից, 23.03.2021

¹ Անթանեսյան Վ., Լոռվա ժպիտներ, էջ 15-16:

9. Վահան Ավետիսյան, Վարդանը, Երևան, «Զանգակ -97», 2008, էջ 221-222
10. Ֆեյսուրյան գրառումներ, Լոռվա հունր, 17. 02. 2018, 4.08.2022

■ **АРМЕН САРКИСЯН**

**АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ НЕБЫЛИЦЫ И ПОБАСЕНКИ.
ТЕМАТИЧЕСКИЕ И СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ**

Резюме

Уже более 150 лет в собраниях анекдотов, томах сказок, книгах басен и в других разнородных изданиях (книги, посвящённые местностям, диалектологические исследования и др.) встречаются такие виды эпического сатирического фольклора, которые по своей природе, замыслу и образам лишены самых важных качеств, характеризующих жанр вышеперечисленных видов фольклорного творчества, таких как: обширные возможности разнородных тематических проявлений, многообразие в создании образов, различные приёмы выражения юмора, концовка представленного материала, вызывающая неожиданный смех и т.д.

Подобные образцы не были удостоены должного внимания со стороны специалистов и не были выделены в качестве самостоятельного вида в фольклоре, не были чётко представлены и отмечены основные отличительные черты, определяющие их жанр и те границы, по которым отличаются мнимые образцы от вышеперечисленных видов фольклорного творчества.

Однако подобные народные произведения выделяются самобытностью тематических проявлений, структурным своеобразием, особенностью средств выразительности и преподнесения материала. В отличие от лживости и лжи, выдумки и вымыслы относятся к тем видам народного сатирического творчества, от которых получает удовольствие и рассказчик, и слушатель.

Тот, кто представляет выдуманные истории, не является лжецом и не опасен для окружения. Как и было представлено в образцах многих составителей сборников, он всего лишь хвостун.

Подобные фольклорные произведения эпического сатирического жанра мы называем **небылицами** и **побасенками**. При этом в качестве признака, определяющего их жанр, исходной точкой для небылиц считаем наличие выдуманных **сюжетных** историй (иногда с коротким, а иногда с развёрнутым сюжетом), а в случае с побасенками – **бессюжетный** (с построением речи в виде прозы, как с диалогами, так и без них, либо в стихотворной форме) вымышленный характер.

Ключевые слова: *армянский эпический фольклор, сатирический фольклор, микроминиатюры и юмористические истории – анекдоты, небылицы, сюжетная и бессюжетная структура, тематические и структурные особенности*

■ ARMEN SARGSYAN

ARMENIAN FOLK PATTERS AND LIAR SAYINGS: THEMATIC AND STRUCTURAL FEATURES

Summary

For more than 150 years, in collections of anecdotes, volumes of fairy tales, books of fables and various other publications (books dedicated to locations, dialectological studies, etc.), there have been such types of epic satirical folklore, which in their nature, goals and characters do not possess the most essential features that characterize the genre the types of the types mentioned above - extensive and comprehensive opportunities for various thematic manifestations, diversity of character creation, various devices of jest expression, unexpected laughter-inducing ending of the material conveyed, etc.

Such samples have not earned proper attention from professionals and have not been distinguished as a separate type of folklore, their main distinguishing features that define the genre and the boundaries whereby lie quote samples differ from the above types of folk art have not been clearly presented and indicated.

However, such pieces of folk art stand out for their unique thematic manifestations, structural distinctions, figurative tools and

peculiarities of presenting the material. In contrast to lies and deceits, lie fictions belong to the types of popular satirical folklore that are enjoyed by both the narrator and the listener.

The one who tells liar sayings is not a liar himself and is not dangerous for those around him. He is a boaster, as it is depicted in the samples of many compilers of folk art.

We call such folkloric artworks of the epic satirical genre and *liar quotes* and *liar sayings*. It should be noted that, as a characteristic feature of the genre, we have taken as a starting point the presence of *plotful* (sometimes with a short, sometimes extensive plot) lie stories, and for liar quotes – *plotless* (dialogue and prose or verse structure without a dialogue) lie sayings of fictional nature.

Key words: *Armenian epic folklore, satirical folklore, Micro-miniatures and humorous stories – anecdotes, folk patterns and liar sayings, certain plot structure, thematic and structural distinctions*

- **Արմեն Շավարշի Սարգսյան** – բանագետ, բանասիրական գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող: Հետազոտությունների ոլորտները՝ գրականության և բանահյուսության փոխառնչության հարցեր, հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ (անեկդոտներ), հայ ժողովրդական ստապատումներ և սուտասելուկներ, մանկական զվարճախոսություններ, մանկական բանահյուսություն և այլն: Հեղինակ է ավելի քան 20 գրքերի և մենագրությունների ու 130-ից ավելի գիտական և հրապարակախոսական հոդվածների:

Մենագրությունները՝ «Պարույր Սևակը մանկագիր», «Պարույր Սևակը և ժողովրդական բանահյուսությունը», «Զավեշտի դրսևորման միջոցները հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում», «Մանկական զվարճախոսություններ», «Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ» (անեկդոտներ):

Армен Шаваршович Саркисян – Фольклорист, доктор филологических наук, ведущий научный сотрудник Института археологии и этнографии национальной академии наук Республики Армения. Область исследований – вопросы взаимосвязи литературы и фольклора, армянские народные юмористические миниатюры и юмористические истории – анекдоты, детский фольклор, детский анекдот, армянские народные лжесказания, и. т. д.

Автор 20-и книг и более чем 130 научно-исследовательских и публицистических статей.

Монографии: «Паруйр Севак – детский писатель», «Паруйр Севак и народный фольклор», «Смешные детские высказания», «Средства проявления курьеза в армянских народных миниатюрах и смешных высказаниях», «Армянские народные юмористические микроминиатюры и юмористические истории – анекдоты», «Армянские народные небылицы и побасенки».

Armen Sh. Sargsyan – Folklorist, Ph. D. in Philology, Leading researcher at Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of Armenia.

Research fields – interrelations of literature and folklore, children folklore, children's entertaining, Armenian folk satirical stories and anecdotes, Armenian folk poetry, etc.

Author 20 Books and Monographs and 130 Scientific and Publicistic articles.

Monographs: «Paruyr Sevak Children's Writer», «Paruyr Sevak and National Folklore», «Children's Anecdotes», «Ways of Expression of the Humor in the Armenian Jokes», «Micro-miniatures and humorous stories – anecdotes», «Armenian ARMENIAN Folk Patterns and Liar Sayings».

armensargg@gmail.com